ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԴՏՊ-1141-11015/22ԿԱԵ

Քաղ. Երևան 31 հոկտեմբեր 2022թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Սամվել Մուրադյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպությունը, ի դեմս կազմակերպության տնօրեն Մարի Մաթոսյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «1141 Ընտանիքներին՝ կանանց և երեխաներին աջակցություն» ծրագրի «11015 Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ» միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ գումարից մինչև 6 112 500 (վեց միլիոն հարյուր տասներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելված 1-ում: Ծրագիրը իրականացվում է Երևան քաղաքում՝ տարեկան 30 շահառուի համար:

1.3. Պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ՝ պայմանագրի 9.7 կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու դեպքում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.2.3 նախարարության համաձայնությունը ստանալու դեպքում՝ կատարել ՀՀ պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների հոդվածային վերաբաշխում՝ բայց ոչ ավել, քան ֆինանսական առաջարկի ծախսային յուրաքանչյուր հոդվածի 10%-ի չափով:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար մինչև դեկտեմբերի 20-ը՝ պետական մարմին

ներկայացնել հանձնման-ընդունման ակտը՝ համաձայն սույն պայմանագրի N5 հավելվածի և հաշվետվություններ համաձայն սույն պայմանագրի N2 և 3 հավելվածների: Միջոցառումների իրականացման մասին եռամսյակային հաշվետվություն ներկայացնել մինչև հաշվետու ժամանակահատվածին հաջորդող ամսվա 10-ը, իսկ 4-րդ եռամսյակի համար մինչև դեկտեմբերի 20-ը:

Ծրագրի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ամփոփ հաշվետվություն:

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

2.4.8. Սույն պայմանագրի 4.1-րդ կետով սահմանված հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն ներկայացնել կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածի: «Հաշվետվությանը կից անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարների մասով կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ հաշիվ ապրանքագրեր, վճարման հանձնարարականներ, աշխատաժամանակի հաշվարկի թերթիկ, աշխատավարձի հաշվարկի կամ վճարման տեղեկագրեր, ճանապարհածախսերի փոխհատուցման թերթիկ և այլն»:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության և/կամ նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից բացառապես նախօրոք մշակված հարցաթերթի միջոցով և/կամ ըստ անհրաժեշտության՝ առանց հարցաթերթի:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է կատարվող գործողությունների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով գործողություններին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր, ինչպես նաև կապ հաստատելով ծրագրի շահառուների հետ՝ նրանց շրջանում հարցում և եզրակացություն տալու նպատակով՝ առանց կազմակերպությանը տեղեկացնելու կամ ներգրավելու այս գործընթացում:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.6. Եռամսյակային հաշվետվությունների ներկայացված և համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա բոլոր արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատվում է համապատասխան վարչության կողմից՝ ըստ անհրաժեշտության ամփոփ վերլուծությունների և մոնիթորինգի վարչության հետ համատեղ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատրման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը էլեկտրոնային համակարգի միջոցով պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 5) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 4) նախատեսված ամիսներին, ըստ պայմանագրի շրջանակներում փաստացի իրականացված միջոցառումների կատարման արդյունքի:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ

6.5 Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը: Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է կողմերի միջև 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ

դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը (դրամաշնորային ծրագիրը՝ պետք է բխի միջոցառումների նկարագրի պահանջներից և մեթոդական ցուցումներից) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 6):

9.2 այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4. կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ https://www.mlsa.am/?cat=142 կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

9.5. Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.6. Պայմանագրով ստանձնած պարտավորությունը դադարում է կատարման անհնարինությամբ, եթե դա առաջացել է այնպիսի հանգամանքից, որի համար կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ՝ պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում գրավոր ծանուցելով մյուս կողմին: Այդ դեպքում կողմերը իրավունք չունեն միմյանցից պահանջելու պարտավորության կատարում: Սույն կետում նշված պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում մյուս կողմին

չծանուցելու դեպքում՝ չծանուցող Կողմը պարտավորվում է մյուս կողմին վճարել տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գնի 1 %-ի չափով:

9.7. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.8. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.9. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան, Կառավարական տուն 3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011030716 ՀՎՀՀ 01506515	«Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպություն ՀՀ Բաղրամյան 1 նրբ./շ. 14 բն. 106, ք.Երևան 0019, Հայաստան ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ Հ/Հ 163007041524 ՀՎՀՀ 00116201
Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան	Տնօրեն՝ Մարի Մաթոսյան
(անուն ազգանուն, ստորագրություն) Կ.Տ.	(անուն ազգանուն, ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 1
20~~24~~թ. 01 31 -ին
կնքված N ԴՏՊ-1141-11015/22ԿԱԵ պայմանագրի

«ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ

ՆԿԱՐԱԳԻՐ

Համառոտագիր

Ներկայացրեք ծրագրի ամփոփ նկարագիրը:

Ծրագիրը ընտանեկան բռնությունից տուժած մոտ 30 կանանց և իրենց խնամքի տակ գտնվող երեխաների կտրամադրի սոցիալական, իրավական և հոգեբանական ծառայություններ, ինչպես նաև ապահով տուն:

Ծրագրի նկարագրություն

Հիմնախնդրի և կարիքի հիմնավորում
Նկարագրեք ներկա վիճակը և հիմնավորեք՝ ինչու է անհրաժեշտ ծրագիրը:

Ընտանեկան բռնության հիմնախնդիրը առկա է բոլոր հասարակություններում: Խնդրի դեմ պայքարելու և այն նվազեցնելու համար անհրաժեշտ է համակարգային մոտեցում և համալիր ծառայությունների տրամադրում:
2021թ. նոյեմբեր ամսվա ընթացքում Կանանց աջակցման կենտրոնը ապաստարանի ծառայություն է տրամադրել 53 կնոջ և 86 երեխայի, ովքեր ունեցել են անվտանգության խնդիր:
ՀՀ ոստիկանության տվյալների համաձայն՝ 2021 թվականի ինն ամիսների ընթացքում բռնության դեպքերի թիվը կազմել է 364:
Ծառայությունների տրամադրման կարևոր մաս է կազմում ապաստարանի տրամադրումը: Դրա շնորհիվ կապահովվի բռնության ենթարկված անձանց և նրանց խնամքի տակ գտնվող երեխաների անվտանգությունը:
«Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ» ծրագրի շրջանակներում համալիր աջակցություն կտրամադրվի բռնության ենթարկված անձանց և նրանց խնամքի տակ գտնվող երեխաներին: Ապաստարանում գտնվող շահառուներին կտրամադրվի անվճար սոցիալական, իրավաբանական, հոգեբանական աջակցություն, որի շնորհիվ վերը նշված անձինք կվերականգնվեն և կվերաինտեգրվեն հասարկության մեջ: Շահառուները կստանան անհարժեշտ սնունդ, հագուստ և խնամքի պարագաներ: Ապաստարանում կապհովվի անվտանգ միջավայր, որտեղ կանայք և նրանց երեխաները, ովքեր ենթարկվել են բռնության, կարող են ապրել բռնությունից զերծ և բազմամասնագիտական թիմի աջակցության

արդյունքում կիզորանան, ձեռք կբերեն տարբեր հմտություններ, որն էլ հնարավորություն կտա կանանց և երեխաներին ինքնուրույն, առանց բռնության ապրելու հնարավորություն:

Ապաստարանի գտնվելու վայրը գաղտին է և գտնվելու միջին ժամկետը կազմում է 2 ամիս:

Կազմակերպության փորձառությունը

Ներկայացրեք կազմակերպության առաքելությունը և նպատակները, ինչպես նաև նշված ոլորտում իրականացված ծրագրերը (ժամանակահատված, դրամաշնորհատու կազմակերպություն, բյուջե, նպատակ, արդյունքներ):

Կանանց աջակցման կենտրոնը (ԿԱԿ), որը հիմնադրվել է 2010 թվականին, հանդիսանում է ընտանիքում բռնության ենթարկված անձանց համար լիարժեք ծառայության կենտրոն, որն աշխատում է 23 հոգուց բաղկացած աշխատակազմի օգնությամբ և առաջարկում է համապարփակ աջակցություն ընտանիքում բռնության զոհերին: ԿԱԿ-ն առաջարկում է շուրջօրյա թեժ գիծ, սոցիալական աջակցություն, հոգեբանական խորհրդատվություն, իրավաբանական օգնություն, երկու ապաստարան, մասնագիտական վերապատրաստում, ինչպես նաև կանանց և աղջիկների կրթական և շահերի պաշտպանության ծրագրեր:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Ընտանեկան բռնության ենթարկված անձանց հիմանական խնդիրը անվտանգության ապահովումն է և դրանից բխող բոլոր գործառույթների իրականացումը: Ապահով միջավայրից զատ պետք է համագործակցել բոլոր պետական և ոչ պետական կառույցների հետ, ովքեր պետք է իրենց ներդրումը ունենա բռնության ենթարկված անձանց աջակցության և վերաինտեգրման գործընթացում:

Գործողություններ

Որոնք են այն կոնկրետ գործողությունները և մեթոդները ծրագրի նպատակի իրագործմանն ուղղված յուրաքանչյուր խնդրի համար: Ներկայացնել ամսական կտրվածքով աշխատանքային պլան ՝ համաձայն ստորև ներկայացված ձևաչափի .

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն	*Կանանց աջակցման կենտրոն*
Ծրագիր	«Ընտանքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ»

Ժամանակահատված *01.01.2021թ.- 31.12.2022թ.*

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս											
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Անհատույց ժամանակավոր ապաստարանի տրամադրում ընտանիքում բռնության ենթարկված անձանց և նրանց խնամքի տակ գտնվողներին, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց իրենց կարիքներին հարմարցված և մատչելի միջավայրով ապահովում:	Սոցիալական աշխատող և ապաստարանի աշխատակից	√	√	√	√	√	√	√	√	√	√	√	√
2	Կարիքների գնահատման հիման վրա՝ ընտանիքում բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ գտնվող անձանց սննդով, հագուստով, և այլ անհրաժեշտ պարագաներով,ինչպես նաև երեխաներին դասապատրաստման համար անհրաժեշտ պիտույքներով ապահովում:	Ապաստարանի աշխատակից	√	√	√	√	√	√	√	√	√	√	√	√

3	Անվճար հոգեբանական և իրավաբանական օգնության տրամադրում ապաստարանում գտնվող ընտանիքում բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ գտնվող անձանց:	Հոգեբան Իրավաբան	√	√	√	√	√	√	√	√	√	√	√	√
4	Աջակցում և ուղղորդում ապաստարանում գտնվող շահառուներին մասնագիտական հմտությունների ձեռքբերման, աշխատանքի տեղավորման, պետական ծրագրերից կամ այլ կառույցներից սոցիալական աջակցություն ստանալու նպատակով:	Սոցիալական աշխատող	√	√	√	√	√	√	√	√	√	√	√	√
5	Ընտանիքում բռնության ենթարկվածների և նրանց խնամքի տակ գտվող անձանց համաձայնությամբ՝ կազմակերպում են նրանց կողմից առողջապահական հաստատություններ դիմելու գործընթացը:	Սոցիալական աշխատող	√	√	√	√	√	√	√	√	√	√	√	√

6	Ընտանիքում բռնության ենթարկվածներին միանվագ դրամական փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ միջնորդության կազմում և ներկայացում Լիազոր մարմնին, անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրման օժանդակում:	Սոցիալական աշխատող	√	√	√	√	√	√	√	√	√	√	√	√

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Ովքեր են ծրագրի ուղղակի շահառուները: Նկարագրեք ծրագրի շահագրգիռ կողմերին և հետաքրքրված խմբերին և նրանց ներգրավվածությունը ծրագրում:

Ապաստարանի ծրագրի շահառուներ են հանդիսանում ընտանիքում բռնության ենթարկված այն կանայք և երեխաները, որոնց կյանքին վտանգ է սպառնում: Սոցիալական աշխատողը նախքան ապաստարան ընդունելը կատարում է կարիքի և վտանգի գնահատում: Վտանգի գնահատման արդյունքում, երբ ռիսը բարձր է լինում, առաջարկվում է ապաստարանի ծառայություն: Շահառուի համաձայնության դեպքում համապատասխան համաձայնագիր ստորագրելուց հետո տեղափոխվում է գաղտնի ապաստարան:

Ռիսկերի գնահատում

Որոնք են ծրագրի իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերը և դրանց հաղթահարման ռազմավարությունը: Ծրագրի ընթացքում, հնարավոր է, որ ԸԲ բռնության ենթարկված կանայք ունենան անվտանգության խնդիրներ: Այս վտանգը նվազագույնի հասցնելու համար ԿԱԿ-ն ունի անվտանգության համակարգ և՛ ապաստարանում, և՛ գրասենյակում: Արտակարգ իրավիճակների ժամանակ, երբ շահառուն կամ անձնակազմի անդամները վտանգի տակ են, մենք կարող ենք անհապաղ օգնություն կանչել: ԿԱԿ-ի անձնակազմն ունի ավելի քան տաս տարվա փորձ և ստույգ գործիքակազմ՝ ԸԲ բարդ դեպքերը լուծելու համար, որոնք պահանջում են անվտանգության պլանավորման ավելի ինտենսիվ մոտեցումներ:

2020 թվականից մինչ այսօր ծրագրի հիմնական ռիսկը և խոչընդոտը հանդիսանում է ԿՈՎԻԴ-19: Կազմակերպությունը յուրաքանչյուր բռնության ենթարկված անձի համար նախատեսել է մեկուսացման համար առանձին սենյակ, որտեղ նրանք առանձնանում են մինչև ՊՇՌ թեստի պատասխանը: Պետությունը չի նախատեսել վերը նշված անձանց համար անվճար թեստավորում ինչն էլ լրացուցիչ ծախս է կազմակերպության բյուջեի համար:

Ծրագրի աշխատակազմը

Նկարագրել ներգրավվող և վճարվող աշխատակիցների և/կամ փորձագետների պատասխանատվության շրջանակը և կցել կենսագրականները:

Ծրագրի իրականացման համար կազմակերպությունը ներգրավվել է՝ ծրագրի համակարգող, երկու սոցիալական աշխատող, երկու փաստաբան, մեկ հոգեբան մեծերի համար, մեկ մանկական հոգեբան, չորս ապաստարանի աշխատակից և մեկ վարորդ:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան	Տնօրեն՝ Մարի Մաթոսյան
(անուն ազգանուն, ստորագրություն)	(անուն ազգանուն, ստորագրություն)
Կ. S.	Կ. S.

Հավելված 2
20~~22~~թ. 01 31 -ին
կնքված N ԴՏՊ-1141-11015/22ԿԱԵ պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղաք դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան	Տնօրեն՝ Մարի Մսթոսյան
(անուն ազգանուն, ստորագրություն)	(անուն ազգանուն, ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3
20թ. 07 31-ին
կնքված N ԴՏՊ-1141-11015/22ԿԱԵ պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<< 202__ թվականի պետական բյուջեի----------ամսում փոփոխուն ծախսերի գծով փոխհատուցման ենթակա և հաստատուն ծախսերի գծով փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ

Ծախսային հոդվածներ		Հաստատված նախահաշվի գումարը		Հաշվետու ժամանակահատվածում			Տարեսկզբից աճողական			
Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	ծածկագիրը	Պետական բյուջեից	Այլ միջոցներից նախատեսված	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Այլ միջոցներից կատարված դրամական միջոցներ	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Այլ աղբյուրների անվանումները
1	3	4	5	6	7	8	9	10	11	12
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝	**x**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	***4100***									
Էներգետիկ ծառայություններ	**4212**									
Կոմունալ	**421**									

ծառայություններ	**3**									
Կապի ծառայություններ	**4214**									
Ապահովագրական ծախսեր	**4215**									
Գույքի և սարքավորումների վարձակալություն	**4216**									

Հանձնեց՝
Տնօրեն՝_____ Կազմակերպություն՝_____

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան

(անուն ազգանուն, ստորագրություն)

Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Տնօրեն՝ Մարի Մաթոսյան

(անուն ազգանուն, ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված 4
20 թ. 01 31 -ին
կնքված N ԴՏՊ-1141-11015/22ԿԱԵ պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազ.դրամ

Միջոցառման																
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	Անվանումը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում **													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
Լոտ 1 Երևան	99999999/614	Ընտանիքում բռնության ենթարկվածանձանց ապաստարանի ծառայություններ														
			509.375	1,018.75	1,528.13	2,037.50	2,546.88	3,056.25	3,565.63	4,075.00	4,584.38	5,093.75	5,603.13	6,112.500	6,112.500	

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է մինչև ֆինանսական միջոցների նախատեսումը, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:
** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ

Գլխավոր քարտուղար՝ Կամսել Մուրադյան

(անուն ազգանուն, ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՌՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Տնօրեն՝ Մարի Մաթոսյան

(անուն ազգանուն, ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 5
20~~22~~ թ. 01 31 -ին
կնքված N ԴՏՊ-1141-11015/22ԿԱԵ պայմանագրի

Կազմակերպություն

գտնվելու վայրը՝ ք.Երևան
Բաղրամյան 1 նրբ./շ. 14 բն. 106,
Հ/Հ 163007041524
ՀՎՀՀ 00116201

Պետական մարմին

գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան,
Կառավարական տուն 3
Հ/Հ 900011030716
ՀՎՀՀ 01506515

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**
Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան	Տնօրեն՝ Մարի Մաթոսյան
_____	_____
(անուն ազգանուն, ստորագրություն)	(անուն ազգանուն, ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 6
20~~2~~3թ. 01 31 -ին
կնքված N ԴՏՊ-1141-11015/22ԿԱԵ պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1	«Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ»	1.Ընտանիքում բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ գտնվող անձանց ապահովում բնակելի տարածքով:	Ընտանիքում բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ գտնվող անձանց ապահովել անհատույց և ապահով բնակելի տարածքով, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց ապահովել իրենց կարիքներին հարմարցված և մատչելի	Տարեկան առնվազն 30 ընտանիքում բռնության ենթարկվածները և նրանց խնամքի տակ գտնվող անձինք ապահովված են անվտանգ բնակելի տարածքով: Համապատասխան ծառայություններ ստացած անձանց թվաքանակի, ցուցակի, ինչպես նաև դեպքերի	30.12.2022 թ	Եռամսյակային հաշվետվության ներկայացում: (info@mlsa.am էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով)	

			միջավայրով:	հակիրճ նկարագրության առկայություն:			
2		2.Օրենսդրությամբ սահմանված կարգով բնաիրային օգնության ապահովում:	Կազմակերպության կողմից նախապես իրականացված կարիքների գնահատման հիման վրա՝ ընտանիքում բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ գտնվող անձանց ապահովել սննդով, հագուստով, և այլ անհրաժեշտ պարագաներով,ինչ պես նաև երեխաներին դասապատրաստման համար անհրաժեշտ պիտույքներով:	Կացարանում գտնվելու ընթացքում շահառուներն իրենց կարիքին համապատասխան ապահովված են անհրաժեշտ սնունդով, հագուստով և առաջնային կարիքից բխող այլ պարագաներով: Համապատասխան օգնություն ստացած շահառուների թվաքանակի և ցուցակի առկայություն:	30.12.2022 թ	Եռամսյակային հաշվետվության ներկայացում:	
3		3.Օրենսդրությամբ սահմանված կարգով հոգեբանական և իրավաբանակ	Անվճար հոգեբանական և իրավաբանական օգնություն տրամադրել ապաստարանում գտնվող	Կարգավորված են ընտանիքում բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ գտնվող անձանց հոգեբանական	30.12.2022 թ	Եռամսյակային հաշվետվության ներկայացում:	

		ան օգնության տրամադրում :	ընտանիքում բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ գտնվող անձանց:	վիճակը, պաշտպանված են նրանց իրավունքները, լիարժեք ինտեգրված են հասարակությանը: Համապատասխան որակավորում ունեցող կամ վերապատրաստում անցած մասնագետների առկայություն: Սույն նկարագրի մեթոդական պահանջներին համապատասխան՝ ծառայություններ ստացած ընտանիքում բռնության ենթարկվածների և նրանց խնամքի տակ գտնվող անձանց թվաքանակի, ցուցակի, ինչպես նաև հոգեբանի, իրավաբանի, (փաստաբանի)			

				խորհրդատվության քանակի, այդ թվում հայցադիմումի, դատարան ներկայացված գործերի քանակի առկայություն:			
4		4.Ընտանիքում բռնության ենթարկված անձանց մասնագիտական հմտությունների ձեռքբերման, աշխատանքի տեղավորման, ինչպես նաև պետությունից կամ համապատասխան կազմակերպություններից սոցիալական աջակցություն ստանալու հարցերում աջակցում:	Աջակցում և ուղղորդում են կացարանում գտնվող շահառուներին մասնագիտական հմտությունների ձեռքբերման, աշխատանքի կարիք ունեցող անձանց աշխատանքի տեղավորման, ինչպես նաև պետական ծրագրերից կամ այլ կառույցների կողմից իրականացվող ծրագրերից սոցիալական աջակցություն ստանալու հարցերում:	Ընտանիքում բռնության ենթարկված անձինք ձեռք են բերել մասնագիտական հմտություններ, լուծվել է նրանց զբաղվածության կամ այլ սոցիալական աջակցության ստացմանն առնչվող խնդիրները: Մասնագիտական հմտություններ ձեռք բերած, աշխատանքի տեղավորված ինչպես նաև պետական և այլ ծրագրերից սոցիալական աջակցություն ստացած անձանց	30.12.2022 թ	Եռամսյակային հաշվետվության ներկայացում:	

				թվաքանակի և ցուցակի առկայություն:			
5		5.Օրենսդրությամբ սահմանված կարգով ընտանիքում բռնության ենթարկվածների և նրանց խնամքի տակ գտնվող անձանց բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար համալիր աշխատանքների իրականացում:	Ընտանիքում բռնության ենթարկվածների և նրանց խնամքի տակ գտվող անձանց համաձայնությամբ՝ կազմակերպում են նրանց կողմից առողջապահական հաստատություններ դիմելու գործընթացը:	Կլուծվեն ընտանիքում բռնության ենթարկվածների և նրանց խնամքի տակ գտվող անձանց առողջական խնդիրները: Առողջապահական հաստատությունների ց անհրաժեշտ բժշկական օգնության և սպասարկում ստացած ընտանիքում բռնության ենթարկվածների և նրանց խնամքի տակ գտնվող անձանց թվաքանակի և ցուցակի առկայություն:	30.12.2022 թ	Եռամսյակային հաշվետվության ներկայացում:	
6		6.Օրենսդրությամբ սահմանված կարգով պետության	Ընտանիքում բռնության ենթարկվածներին միանվագ դրամական	Ընտանիքում բռնության ենթարկվածները ապահովված են պետության կողմից	30.12.2022թ	Եռամսյակային հաշվետվության ներկայացում:	

		կողմից տրամադրվող միանվագ ֆինանսական փոխհատուցման ստանալու գործընթացում ընտանիքում բռնության ենթարկվածներին աջակցում և միջնորդության ներկայացում:	փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ միջնորդության կազմում և ներկայացում Լիազոր մամնին, անհրժեշտ փաստաթղթերի հավաքագրմանն օժանդակում:	միանվագ դրամական աջակցությամբ (50, 100, 150 հզ. դրամի չափով): Դրամական փոխհատուցում ստացած անձանց ցանկի առկայություն՝ որպես անձնական գործի մաս:			
	ԸՆԴԱՄԵՆԸ						**6 112 500**

Միջոցառումն իրականացվում է դրամաշնորհի տրամադրման մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից, որն ապաստարանի ծառայություններ է մատուցում ընտանիքում բռնության ենթարկված անձանց, անհրաժեշտության դեպքում նրանց խնամքի տակ գտնվող անձանց (այսուհետ՝ շահառուներ)՝ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում, կարգով և պայմաններով:

Շահառուներ՝

Միջոցառմամբ նախատեսվում է ծառայություններ մատուցել տարեկան 30 շահառուի:

Մեթոդաբանական պահանջներ՝

Կազմակերպությունը ծրագիրը իրականացնելիս պետք է հիմնվի հետևյալ իրավական ակտերով նշված պահանջների վրա՝

- «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք,
- «Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցության հաշվեհամարի տնօրինման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 29-ի N 333-Ն որոշում,
-«Ընտանիքում բռնության ենթարկվածների ապաստարաններին և դրանց անձնակազմին ներկայացվող պահանջները, ընտանիքում բռնության ենթարկվածների համար նախատեսված ապաստարանների ֆինանսավորման պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N1078-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ և 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N1069-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 29-ի N364-Ն որոշում:

Ազդեցություն

- հիմք կդրվի ընտանիքում բռնության երևույթի կանխարգելմանը,
- կապահովվի ընտանիքում բռնության ենթարկված անձանց անվտանգ միջավայրի, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված սոցիալական այլ ծառայությունների տրամադրման և միջազգային պայմանագրերով ամրագրված դրույթներ,
- ընտանիքում բռնության ենթարկված անձինք՝ կստանան օրենսդրությամբ սահմանված համապատասխան աջակցությունները,
- կապահովի սերտ համագործակցություն քաղհասարակական դաշտի հետ, քանի որ անհրաժեշտ ծառայությունները մատուցվում են հասարակական կազմակերպությունների միջոցով՝ ծառայությունների պատվիրակման սկզբունքով,
- կիրականացվի ապաստարանում տեղակայված ընտանիքում բռնության ենթարկված անձանց կարգավիճակի վիճակագրություն

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան

(անուն ազգանուն, ստորագրություն)

Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Տնօրեն՝ Մարի Մաթոսյան

(անուն ազգանուն, ստորագրություն)

Կ. Տ.